«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-608-31.05.2023-ԱոՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումներն առաջարկվում է նախատեսել առանձին հոդվածի տեսքով, որտեղ կամրագրվեն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակները, այն վայրերը, որտեղ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելված է՝ կարգավորելով նաև նույն ծառայությունների շարժական տեսակի մատուցման դեպքերը:

Միաժամանակ անհրաժեշտ է նախագծում բացառություն նախատեսել այն դեպքերի համար, երբ պացիենտը հրաժարվում է տեսալուսանկարահանող սարքերի կիրառմամբ բժշկական օգնություն ստանալուց, այլապես այն կդիտարկվի հակասահմանադրական:

Առաջարկվում է նաև նախագծում ամրագրել դրույթ, որի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսանելի վայրում կտեղադրվի իրազեկման նշան տեսալուսանկարահանող սարքեր օգտագործվելու դեպքում՝ հստակ նշելով, թե այն որտեղ է տեղադրվելու, բժշկական կազմակերպության, թե բժշկական օգնության և սպասարկման տրամադրման կաբինետի մուտքերի մոտ: Վերջին դեպքում նախագծում առաջարկվում է ամրագրել, որ տեսալուսանկարահանող սարքերի կիրառմամբ ստացված տվյալները բժշկական գաղտնիք են համարվում:

Առաջարկվում է դրույթներ նախատեսել նաև տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ձեռք բերված տվյալները պահպանելու, ժամկետների, ինչպես նաև այդ տվյալները երրորդ անձանց տրամադրելու վերաբերյալ: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տվյալները հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են՝ առաջարկվում է սահմանել նաև կարգ այդ տվյալները պահպանելու վերաբերյալ՝ հստակեցնելով, որ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ձեռք բերված տեսանյութերը պահպանվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակներով պայմանավորված:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47^1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում՝

առաջացնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար տուգանքի նշանակում՝ տեղադրված յուրաքանչյուր տեսալուսանկարահանող սարքի դեպքում, սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:»: